ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՆՎԱՃՈՒՄԸ

Անդրիան Նիկոլաևի և Պավել Պոպովիչի «Վոստոկ—3» և «Վոստոկ—4» արբանյականավերով կատարած անօրինակ խմբային տիեզերական թռիչքը նոր դարագլուխ բաց արեց տիեզերքի սովետական ուսումնասիրությունների գործում:

Գիտության պատմության մեջ հավասար չունեցող այդ թռիչքի արդեն առաջին արդյունքները վկայում են սովետական գիտության ու տեխնիկայի առաջնությունը՝ մարդկության բարօրության համար տիեզերքի անծանոթ տարածությունների յուրացման գործում:

Տիեզերքի նաճապարհը, որ մեկ տարի առաջ բաց արեցին Յուրի Գագարինը և Գերման Տիտովը, ասիճանաբար դառնում է մի լայն ուղի, որով մարդկությունը ընթանում է, դեպի աշխատանքի ու բանականության նորանոր հաղթանակները: Անդրիան Նիկոլաևի և Պավել Պոպովիչի խմբային թռիչքը «Վոստոկ—3» և «Վոստոկ—4» արբանյականավերով այդ ուղու մի նոր էտապն է, որ մոտեցնում է միջմոլորակային թռիչքների ժամանակաշրջանը: Նրանց թռիչքը մեծ նշանակություն ունի միջմոլորակային կայանների մշակման, ավելի կատարյալ տիեզերանավերի ստեղծման, միջմոլորակային ուղեծրերի յուրացման համար:

Երկարատև խմբային տիեզերական թռիչքը իրականացնելու համար ստեղծվեցին կատարելագործված տիեզերական արբանյականավեր, որոնց կառավարման սիստեմները հնարավորություն տվեցին լիովին իրագործելու թռիչքի ընդարձակ ծրագիրը: Տիեզերանավերի բոլոր սիստեմների հստակ աշխատանքի շնորհիվ արբանյականավերը արտակարգ ճշգրտությամբ դուրս բերվեցին իրենց ուղեծրերը և անթերի վայրէջք կատարեցին նախապես որոշված վայրերում: Երկարատև թռիչքի ընթացքում մեր հերոս տիեզերագնացները բացառիկ արժեքավոր գիտական նյութեր կուտակեցին, որոնց լիակատար մշակումը կպահանջի երկար ժամանակ:

«Վոստոկ—3» և «Վոստոկ—4» կատարելագործված տիեզերական արբանյականավերի ստեղծման և ձեռնարկված հատուկ միջոցների շնորհիվ հնարավոր եղավ ապահովել տիեզերագնացների տևական թռիչքները տիեզերական պայմաններում, մասնավորապես նրանց գերազանց աշխատունակությունը անկշռության և տիեզերական թռիչքի մյուս գործոնների ազդեցության պայմաններում, իրականացնել անխափան ռադիո կապ միմյանց և Երկրի հետ, հստակորեն կատարել թռիչքի համար նախատեսված ամբողջ բարդ ծրագիրը:

Նիկոլաևի և Պոպովիչի թռիչքի մեծ տեղությունը, «Վոստոկ—3» և «Վոստոկ—4» արբանյականավերի գիտական բոլոր սարքերի անխափան աշխատանքն, ինչպես և տիեզերագնացների անմիջական ակտիվ մասնակցությունը գիտական հետազոտություններին, նոր

ու արժեքավոր տեղեկություններ տվեցին սովետական գիտության՝ մարդու օրգանիզմի վրա տիեզերական թռիչքի բարդ, ինչ ուսումնասիրված պայմանների ազդեցության մասին: Ուսումնասիրությունների նախնական արդյունքները վստահություն են ներշնչում, որ հնարավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն տիեզերական շատ ավելի տևական թռիչքների պայմաններում տիեզերագնացների առողջությունն ու աշխատունակությունը:

Իրականացված խմբային տիեզերական թռիչքը սովետական գիտնականների, կոնստրուկտորների, ինժեներների, բանվորների աշխի ընկնող սխրագործությունն է, մեր ժողովրդի արժանավոր զավակների՝ տիեզերագնաց օդաչուներ Անդրիան Գրիգորևիչ Նիկոլաևի և Պավել Ռոմանովիչ Պոպովիչի աշխի ընկնող սխրագործությունը: Վերջինները արիություն, հմտություն, կազմակերպվածություն ապահովեցին այդ թռիչքի լիակատար հաջողություն, մի նոր փառավոր էջ գրելով սովետական ժողովրդի, սովետական գիտության ու տեխնիկայի նվաճումների պատմության մեջ, այն սխրագործությունների, որ կատարվել են հանուն մեր մեծ Հայրենիքի, հանուն ամբողջ մարդկության խաղաղության և առաջադիմության:

Այն բազմաթիվ պրոբլեմների թվում, որոնց դրական լուծումից մեծ չափով կախված է ապագա երկարատև տիեզերական նանապարհորդությունների հաջող ելքը, ամենակարևորներից մեկը մարդու օրգանիզմի վրա տիեզերական թռիչքի գործոնների ամբողջության ներգործության պրոբլեմն է:

Դոկտ. Ա. Գազարինի և Գ. Ս. Տիտովի թռիչքից հետո սովետական գիտնականները ու կոնստրուկտորները հսկայական աշխատանք կատարեցին, որի նպատակն էր բարձրացնել մարդու ֆիզիոլոգիական կայունությունը տիեզերական թռիչքի գործոնների ազդեցության նկատմամբ, ավելի ևս բարելավել տիեզերագնացի կյանքի ու աշխատանքի պայմանները տիեզերանավի խցիկում տևական աշխատանքի ժամանակ:

«Վոստոկ—3» և «Վոստոկ—4» տիեզերանավերի թռիչքների ժամանակ բժշկա-կենսաբանական հետազոտությունների առավել կարևոր գիտական խնդիրները էին՝

—Տիեզերական տևական թռիչքի ժամանակ մարդու ֆիզիոլոգիական հիմնական ֆունկցիաների վիճակի ուսումնասիրումը:

—Երկրի շուրջը տևական ուղեծրային թռիչքի պայմաններում ֆիզիոլոգիական պրոցեսների օրական պարբերականության ընթացքի առանձնահատկությունների հետազոտումը:

—Տիեզերանավերի թռիչքի զանազան հատվածներում տիեզերագնացների աշխատունակության ուսումնասիրումը:

—Տիեզերական թռիչքների համար տիեզերագնացների ընտրության և մարզման մեթոդների արդյունավետության ուսումնասիրումը:

—Թռիչքի ժամանակ կյանքի ապահովման և անվտանգության սիստեմների աշխատանքի արդյունավետության ուսումնասիրումը:

Ինչպես հայտնի է, տիեզերագնացներ Ա. Նիկոլաևի և Պ. Պոպովիչի խմբային թռիչքը ավարտվեց արտակարգ հաջողությամբ: Թռիչքի ժամանակ կատարված հետազոտությունների շնորհիվ ստացված բազմաթիվ նոր գիտական տվյալները զգալիորեն կօժանդակեն հետագա ավելի բարդ ու երկարատև տիեզերական թռիչքների նախապատրաստման գործին: Այդ թռիչքի ժամանակ լուրջ ստուգման ենթարկվեցին տիեզերական նանապարհորդության պայմաններում մարդու նորմալ կենսագործունեության ապահովման մե-

թողներ: Դրա հետ կապված խնդիրների հաջող լուծման լավագույն վկայությունն է տիեզերագնացների առողջության գերազանց վիճակը վերադարձից հետո: Այժմ լիովին ապացուցված է, տիեզերական տարածությունում մարդու երկարատև ճանապարհորդությունների հնարավորությունը, որը դադարել է երազանք լինելուց և դրվել է իրական հողի վրա:

Սովետական Միությունում տիեզերական տարածության նվաճումը կատարվում է մեծագույն հետևողականությամբ. քայլ առ քայլ առաջադրվում ու իրականացվում են նոր խնդիրներ, որոնք նախորդ նվաճումների տրամաբանական զարգացումն ու կատարելագործումն են: Մեր երկրում կենսագործվող այդ աշխատանքները նպատակ ունեն նվաճել տիեզերքը՝ հանուն համամարդկային բարեկեցության, նրանք առաջադրված են մի նպատակով՝ զարգացնել գիտությունը հանուն բնության նկատմամբ մարդու իշխանության մեծացման, բնության գաղտնիքների բացահայտման, անել ամեն ինչ, որպեսզի բնությունը լիովին ծառայի մարդու կարիքների բավարարմանը:

Այդ իսկ նպատակների իրականացման համար, տիեզերական տարածության խաղաղ յուրացման համար Սովետական Միությունը պայքարում է և կշարունակի պայքարել տիեզերական հետազոտությունների ծրագրերից այնպիսի փորձերը բացառելու համար, որոնք կարող են խանգարել գիտության զարգացմանը և վնասել տիեզերական ուսումնասիրությունների ասպարեզում միջազգային համագործակցությանը:

Ա. Նիկոլաևի և Պ. Պոպովիչի խմբային թռիչքը մի նոր վկայությունն է այն բանի, թե գիտության ու տեխնիկայի համաշխարհային գանձարանը որքա՜ն շատ բան են ներդնում մեր երկրի ազատ ժողովուրդները, այն ժողովուրդները, որոնք կատարում են մարդկային պատմության մեջ մեծագույն գործը՝ կառուցում են կոմունիստական հասարակարգ:

Սովետական գիտության ապշեցուցիչ նվաճումների հիմնական պատճառը սոցիալիստական կարգերի առավելությունները են, որոնք ապահովում են մեր երկրի գիտության, տեխնիկայի, կուլտուրայի ու էկոնոմիկայի անընդհատ առաջադիմությունը:

Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար.